

«ՀԱՅԵՐԵՆԻ ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ» ԲԱՌԱՐԱՆԸ

Թևակոր խոսքերը (նաև շրջասությունները, առածներն ու ասացվածքները և այլն) լեզվի բառապաշարի և շարահյուսական համակարգի մի յուրահատուկ շերտ են ներկայացնում և լեզվաբանական լայն մեկնաբանությամբ հաճախ միավորվում են դարձվածային միավորների կազմի մեջ: Այդ միավորները մեծ չափով բնորոշում են որևէ լեզվի անհատական դիմագիծը, բացում այդ լեզվով խոսողների պատկերավոր մտածողության ներքին շերտերը:

Լեզվական այս տարրերը, ահա, անվանի լեզվաբան, հայագետ Պետրոս Բեդիրյանի գիտական նախասիրությունների շրջանակում հայտնվել են դեռևս տասնամյակներ առաջ: 1971 թ. նա հրատարակել է դպրոցական դարձվածաբանական բառարան, ապա (1973 թ.) հայերենի դարձվածաբանությանը նվիրված արժեքավոր մի հետազոտություն, իսկ բոլորովին վերջերս՝ «Հայերեն շրջասությունների բառարան» (Երևու հրատ.՝ 2002, 2006 թթ.): Հրապարակի վրա է վաստակաշատ լեզվաբանի՝ այս ասպարեզում կատարած աշխատանքի ևս մի պտուղը՝ «Հայերեն թևավոր խոսքեր» մեծադիր բառարանը: Ընդհանրապես պետք է նշել, որ նման լեզվական միավորներն առհասարակ լեզվաբան-ուսումնասիրողի համար որքան հրապուրիչ, նույնքան «քմահաճ ու նենգ» են (Օտտո Եսպերսենի որակումն է)՝ գիտական քննության տրվելու առումով: Մանավանդ դյուրին գործ չէ դրանց բառարանագրական մշակումը: Եվ պատահական չէ, որ մեզանում այդ գործը ձեռնարկել և հաջողությամբ զլուխ է բերել հենց Պ. Բեդիրյանը՝ բառարանագրական երկարամյա փորձ ու հմտություն ունեցող գիտնականը:

Թևակոր խոսքերն, ի տարբերություն դարձվածային այլ կարգի միավորների, ունեն հայտնի և որոշ սկզբնաղբյուրներ. դրանց ստեղծվում կամ առաջին անգամ գործածվում են հայտնի (առավել կամ պակաս) անհատների կամ դրանց խմբի կողմից և ապա «թևեր առնելով» դառնում հանրության սեփականությունը: Դրանց մի զգալի մասը, տարածվելով ու փոխանցվելով լեզվից լեզու, «միջազգային ճանաչում» է ստանում: Ավելորդ է ասել, որ ամենատարբեր բնույթի այդ սկզբնաղբյուրներից թևավոր խոսքեր դարձած արտահայտությունները մեկ առ մեկ հավաքելն արդեն բառարանագրից երկար ու ձիգ տարիների համբերատար և, բացի բուն իմաստով, մեղվաջան աշխատանք է պահանջում: Հավաքչական այդ աշխատանքը Պ. Բեդիրյանից զերեք հինգ տասնամյակ է «խլել»: 1960 թ. սկսած՝ նա հավաքել ու քարտագրել է թևավոր խոսքեր հայ գրականությունից, հայրենի և սփյուռքահայ մամուլից, զանգվածային լրատվության այլ միջոցներից, ֆիլմերից, բանավոր խոսքից: Բառարանում ներկայացված 2265 թևավոր խոսքերը քաղվել են ընդհանուր առմամբ 595 սկզբնաղբյուրներից, բերվում են 2250 նմուշներ 269 հեղինակից, 553-ը՝ 54 անուն զանգվածային լրատվամիջոցներից:

Հետաքրքրվողները կարող են այդ աղբյուրների «բաշխման» մասին տեղեկություններ քաղել «Թևակոր խոսքերի աղբյուրների ցանկից», որը խնամքով կազմել և տեղադրել է բառարանի վերջում: Ինչպես և պետք էր սպասել, թևավոր խոսքերի ամենից «առատաբուխ աղբյուրը» «Աստվածաշունչն» է.

ցանկի տվյալներով բառարանում ներկայացված միավորների ավելի քան մեկ երրորդը (մոտ 800) քաղված է Հին և Նոր Կտակարաններից: Դրանց հաճախակի գործածությունը մեր գրավոր և բանավոր խոսքում, անշուշտ, տարբեր է. կան շատ տարածվածները, որոնց իմաստն ընկալվում է անմիջապես (օրինակ՝ «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»), և ոչ այնքան հայտնիները, որոնց իմաստի մեկնաբանությունը ընթերցողը կարող է գտնել սույն բառարանում: Օրինակ՝ «Հայր Աբրահամի օջախ» (նահապետական մեծ ընտանիք), «Չայնը Հակոբինն է, ձեռքը՝ Եսավինը» (տարբեր գործողներ են. ուրիշ մարդ է խառնված), «Աղբյուր փակեալ և դուռն կնքեալ» (մարդու համար անմատչելի, ձեռք չդիպած մարդ), «Բաղաամի էշ» (համարձակ, բողոքող, ընդդիմացող մարդ), «Հովնանի դուռն» (պատասպարող ուժ) և այլն:

Հայ գրողներից էլ, իհարկե, թևավոր խոսքերի ամենահարուստ շտեմարանը թողել է «Անծ լոռեցին»: Նրա շատ երկերի վերնագրեր իսկ արդեն թևավոր խոսքեր են՝ Ջաջ Նազար, Գիջոր, Կիկոսի մահը, Անբախտ վաճառականներ... Սյուսներից էլ՝ «Աշխարհում հաստատ մի բան կա միայն, էն է, որ հաստատ ոչ մի բան չկա», «Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք», «Առաջը՝ ջուր, ետևը՝ տուր» և այլն (ընդհանուր թվով՝ 149):

Կարելի է երբեմն վիճել բառարանի հեղինակի հետ, չհամաձայնել որոշ, հատկապես նորոթյա մասնուլից ու գրականությունից քաղված միավորները թևավոր խոսքերի ցանկ մուծելու համար, բայց պետք է նշել, որ բազմափորձ գիտնականի լեզվական զգացողությունը մեծ մասամբ չի դավաճանել հեղինակին:

«Ոչ հայկական» ծագումով թևավոր խոսքերն ընդգրկելու համար հեղինակն անհրաժեշտաբար օգտագործել է նաև նմանատիպ այլալեզու բառարաններ, որոնց մեծ մասից էլ, ի դեպ, հայերեն այս բառարանը շահեկանորեն տարբերվում է: Այստեղ ներկայացված թևավոր խոսքերի ոչ միայն ծագումն ու բնագրային վկայություններն են բերվում, այլև տրվում են դրանց իմաստային բացատրությունները: Կարևոր հանգամանք է սա, որ մեծ չափով բարձրացնում է բառարանի արժեքը: Բացատրությունները հստակ են, սեղմ, գիտականորեն ստույգ և ընդգրկուն. հատկանիշներ, որ ընդհանրապես հատուկ են Բեղիբյան-գիտնականի ոճին ու ձեռագրին: Բառարանում բերված են նաև միջազգային գործածություն ունեցող թևավոր խոսքերի ուսերեն, անգլերեն, գերմաներեն ու ֆրանսերեն տարբերակները. սա ևս մեծապես արժևորում է աշխատանքը, ընդլայնում նրանից օգտվող մասնագետների ու ընթերցողների շրջանակը:

Հետաքրքիր է, որ հեղինակն անտես չի ատել նաև այն թևավոր խոսքերը, որոնց մեր՝ հայերիս բանավոր կամ գրավոր խոսքում գործածվել կամ գործածվում են այլ լեզուներով. սրանք բառարանի վերջում ներկայացված են առանձին՝ հավելվածով:

Թևավոր խոսքերի այս բառարանն իր ընդգրկմամբ ու խորքով հայերեն խոսքի, հայոց բառ ու բանի մի իսկական շտեմարան է, հարուստ ավանդույթ ունեցող հայ բառարանագրության հերթական ձեռքբերումներից մեկը:

Լեոնիդ Թեյլան

Բանասիրական գիտությունների թեկնածու